ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ./ TEL./ 0235/ 2-23-83
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail:
artashatmeria@artashat.am

N Ե-2183
<<03>> մայիս 2024թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 3, 4, 6 չափաբաժինների մասով Արտաշատի համայնքապետարանի /այսուհետև՝ պատվիրատու/ և ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի միջև /այսուհետև՝ ընկերություն/ 23 փետրվարի 2024թ. կնքված թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով Համակարգիչներ, տպիչ սարքեր, սնուցման բլոկներ, համակարգչային սերվեր, համակարգչային սարքավորումներ մատակարարման պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/:

Ապրանքների մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Վաճառողը պարտավորվում է մատակարարել Համակարգիչներ, տպիչ սարքեր, սնուցման բլոկներ, համակարգչային սերվեր, համակարգչային սարքավորումներ: Որպես պայմանագրի կատարման ժամկետ սահմանվել է «Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 22 օրացուրցային օրվա ընթացքում» ժամկետը: Կողմերի միջև 20 մարտի 2024թ. կնքվել է թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով պայմանագրի թիվ 01 համաձայնագիրը:

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի Տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների մատակարարման պահանջները:

Ընկերությունը խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները:

Արտաշատի համայնքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի պահանջով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի ապրիլի 17-ին և պայմանագիրը ապրիլի 18-ի դրությամբ համարվել է լուծված:

Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և 2-րդ մասի պահանջները՝ Պատվիրատուն գտնում է, որ «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված ԷԼ ԸՆԴ

ԷՎ ՍՊԸ-ին անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կից ներկայացնում ենք ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ աղյուսակը՝

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	***00522502***	***Ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/6***		***«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ***		***02 մայիսի 2024թ., թիվ 2056-Ա ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03***

Համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյան